ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

Տ. ԳՐԻԳՈՐԻՍ ԱԲԵՂԱ ՇՈՒԽԻԿՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ԱՎԵՏՄԱՆ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(7 ապրիլի, 2016 թ.)

Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Ուրա՛խ լեր, բերկրեալ, Տեր ընդ քեզ է»
(Ղուկ. Ա. 28):

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ,

Ահա այս խոսքերով է, որ Գաբրիել հրեշտակը ողջունում է Սուրբ Կույս Մարիամին՝ ավետելով նրան Փրկչի ծնունդը: «Ուրախացի՛ր, բերկրյա՛ղ, Տերը քեզ հետ է»: Այսպիսի խոսքերով է հրեշտակը դիմել նաեւ Աննային՝ ավետելով Սամվել մարգարեի ծնունդը: Ուշադիր ընթերցելով Ղուկասի Ավետարանը՝ մենք տեսնում ենք ակնհայտ կապը Աննայի եւ Մարիամի միջեւ:

Այսօր Ավետման տոնն է, որ հիշատակն է մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի մարդեղության: Ավետման տոնի խորհուրդը հասկանալու համար մի պահ պատկերացրեք, որ մենք անհամբեր սպասում ենք ինչ-որ բանի կամ մեկին, սիրելի անձի վերադարձին, երկար սպասված նամակի կամ լուրի: Պատկերացրեք ձեր զգացումները. օր առ օր, ժամ առ ժամ, րոպե առ րոպե սպասում ենք համբերատար եւ հույսով լեցուն: Գալիս է պահ, որ նույնիսկ սկսում ենք հույսներս կտրել, երբեմն սպառվում է համբերությունը: Եւ հանկարծ մի օր կատարվում է այն, ինչին սպասում էինք, կամ, ավելի ճիշտ, կատարվածի առաջին նշաններն են երեւում.

օրինակ՝ ինքնաթիռը ժամանում է, գալիս է փոստատարը, եւ այդ պահից սկսած՝ արդեն սկսվում է տոնախմբությունը մեր հոգու ու սրտի մեջ: Նախքան մեր սիրելիի ժամանումը, նախքան նամակի բացումը, մենք ներքուստ արդեն ապրում ենք ուրախություն, զվարճանք, խինդ ու խանդավառություն: Ամեն ինչ այս պահից սկսած կարգավորվում է:

Այժմ պատկերացրեք, որ այդ սպասումը տեւում է ոչ թե օրեր, ամիսներ կամ տարիներ, այլ դարեր: Փոքր ազգի վիճակը վատից գնում է դեպի վատթարագույնը. օտար պետություններ գավթել են նրան, անարդար, կաշառակեր եւ, որ ավելի վատ է, կռապաշտ իշխանավորները օրեցօր կեղեքում են ժողովրդին: Աշխարհը գլխիվայր է շրջված: Սակայն այս ժողովրդին խոստացվել էր, թե մի օր աշխարհը պիտի փոխվի, նոր աշխարհ պիտի լինի, որտեղ իշխելու են ոչ թե դրամն ու բռնությունը, այլ արդարությունն ու խաղաղությունը: Եւ այս խոստումը տվել էր ոչ այլ ոք, քան տիեզերքի Արարիչը: Անշու՛շտ, Աստված չի կարող ստել: Եւ բնական է, որ մի օր այդ խոստումը սկսում է իրականություն դառնալ: Երիտասարդ մի աղջկա ավետիս է տրվում, որ նա որդի է ունենալու՝ Աստծո ընտրյալին, Ով իրականացնելու է Արարչի խոստումը ոչ միայն ազգի, այլեւ համայն մարդկության համար: Ղուկաս ավատարանիչը հետաքրքիր նկարագրում է Աստծո գործելակերպը հասարակ մարդկանց կյանքում: Մարդկության փրկությունը իրականացնելու համար Աստված ընտրում է խոնարհներին, ցածր դասակարգի մարդկանց եւ ոչ թե բարձրաստիճան կամ հզոր անձանց: Գաբրիել հրեշտակը չի առաքվում թագուհու կամ իշխանուհու մոտ, այլ՝ պարզ գյուղացի աղջկա: Այս աղջիկը չէր ապրում դղյակներում կամ պալատներում, այլ Հռոմեական կայսրության աննշան գաղութի ոչ այդքան հայտնի Նազարեթ գյուղաքաղաքում: Նա չուներ արծաթ կամ ոսկի, առանձնատուն, պահակախումբ, թանկարժեք քարեր ու զգեստներ, չուներ այն ամենը, ինչ մենք սովորաբար համարում ենք կարեւոր ու անհրաժեշտ մեր կյանքում, առանց որոնց մենք երջանիկ կամ ուրախ չենք կարող լինել՝ դրամ, հասարակական բարձր դիրք, իշխանություն:

Մարիամը քաջ գիտակցում էր, որ կույսը չի կարող հղի լինել: Սակայն նոր կյանքի փոքրիկ շարժումները, որ նա զգում էր իր ներսում, նշանն էին, որ սկսվում է Փրկագործության խորհուրդը: Սիրելին վերադարձել է, նամակը տեղ է հասել: Տոնախմբությունն սկսված է: «Ուրախացի՛ր, ո՛վ բերկրյալ, Տերը քեզ հետ է, քո՛ ներսում է»: Հրեշտակը չի ասում՝ այս կամ այն գործն արա, լսի՛ր, աղոթի՛ր, գնա՛, այլ պարզապես. «Ուրա՛խ եղիր»: Ի՞նչ է մեզ ուսուցանում Մարիամի ավետումը ուրախության մա-

սին: Ուրախությունը զվարճանքը կամ հաճույքը չէ, այլ աշակերտություն Աստծու ստեղծագործ ծրագրին: Եւ ինչպես որեւէ այլ աշակերտություն, ուրախության աշակերտությունը եւս ունի իր քայլերը, աստիճանները. «Մի՛ վախեցիր, Մարիամ»: Սա ուրախության առաջին քայլն է. մի՞թե մենք վախենում ենք... Վախենում ենք, որ հանկարծ լավ ընտանիք, հուսալի ընկերներ ունենալու մեր երազանքները կարող են չիրականանալ: Մի՞թե վախենում ենք մեր ապագայից, անցյալից կամ ներկայից: Ուրախությունը էյֆորիա չէ, որը վանում է մեր բոլոր տագնապներն ու մտահոգությունները:

«Մի՛ վախեցիր», երբ Աստված չի բռնում ակնհայտության, արդյունավետության, մեծության ճանապարհը: «Մի՛ վախեցիր», երբ Բարձրյալը թաքնվում է մարդկային մի փոքրիկ սաղմի ներսում: «Մի՛ վախեցիր» Աստծո նոր ուղիներից, որոնք այսքա՜ն հեռու են բեմերից, լուսարձակներից, պալատներից, ժամանակի հանդիսավոր զգացմունքներից: «Մի՛ վախեցիր» այս մանուկ Աստծուց: Աստված գալիս է պարզության, աղքատության, ոչ-ակնհայտության այն կերպարանքով, որն ունեն ամենաանհրաժեշտ տարրերը՝ ջուրը, օդը, լույսը: Աստված գալիս է առանց ինչքերի, որպեսզի դրանցով չքողարկվի սերը, որպեսզի ուշադրությունը չհեռանա միակ կարեւոր նպատակից:

«Ինչպե՞ս է դա հնարավոր»:

Առաջին խոսքը, որ Մարիամն արտասանում է, Աստծուն տրված «այո՛»-ն չէ, այլ մի հարց. «Ինչպե՞ս է դա հնարավոր»: Ուրախությանը աշակերտելը արծարծում է հարցեր, որոնց միջոցով մեր հոգին եւ մեր կյանքը արտահայտում են մեր փափագները: Մարիամը չի հարցնում. «Ինչ նշան կլինի, որից կիմանամ, որ դա կատարվելու է», ինչպես վարվել էր Զաքարիան (Հմմտ. Ղուկ. Ա. 18), այլ միայն. «Ինչպե՞ս է դա կատարվելու»: Զաքարիան ցանկանում է մի նշան, որ ստացած ավետիսը ճշմարիտ է, ուզում է մի երաշխիք: Մարիամի մեջ իմաստի փնտրտուքն է, ոչ թե նշանի: Մարիամը ցանկանում է իմանալ, թե ինչպե՛ս են համատեղվելու երկու հակադիր իրականությունները՝ զավակ ունենալն ու տղամարդ չճանաչելը: Նա հարցեր է առաջադրում: Իսկ հարցնելը ոչ թե կասկածանքի նշան է, այլ հավատքի կենդանության: Վարանումներ ունենալը, հարցադրումներ կատարելը Տիրոջ առաջ իբրեւ մարդ կանգնելու մի կերպ է, քանի որ հարցեր տալը մարդկային է: Շատ հաճախ անքննաբար, առանց հարցերի ընդունված հավատքը կարող է ծանրագույն վնասների պատճառ դառնալ:

«Ահա՛ ես, Տիրոջ աղախինն եմ»:

«Տիրոջ աղախին» անվանվելը անարժանության հաստատում չէ, այլ՝ հայտարարություն, որով ապրելն այսուհետեւ նշանակելու է նվիրվել Նրա ծառայությանը, մասնակցել Նրա ծրագրերին, լինել Նրա հետ համագործակից, մանավանդ թե՝ համա-արարիչ մի նոր պատմության: «Աղախին» կամ «ծառա» անունն է նրանց, ովքեր ասում են. «Իմ կոչումն ավելին արժե, քան իմ կյանքը, սերը, որը մղում է ինձ»: Եւ այստեղ ի հայտ է գալիս ուրախության աշակերտության մյուս քայլը՝ «Ուրախ լինել», ինչը նշանակում է սեփական ես-ը չդարձնել աշխարհի կենտրոնը, սեփական հաջողությունը, ինքնահաստատումը չդարձնել կյանքի գաղափարական: Ուրախության աշակերտը ծառա է, բայց ոչ մարդկանց, այլ Աստծու: «Աստծու Ծառան» անունն է նրանց, ովքեր քաջությունն ունեն չպատկանելու իրենք իրենց: Ծառայությունը սիրո մյուս անունն է: Այն անդադար հայտարարում է. «Իմ սերը ավելին արժե, քան իմ կյանքը»:

«Թող քո խոսքի համաձայն լինի ինձ»:

Ղուկասի ավետարանում այս արտահայտությունն ունի բերկրանքի, տոնական խանդավառության իմաստ. «Մեծապես ուրախ եմ այն բանի համար, որ ասացիր, եւ ուզում եմ, որ կատարվի»: Բերկրանքի մի արտահայտություն սկզբում («ուրախ եղիր»), տակավին բերկրանքի մի արտահայտություն նաեւ վերջում («թող շուտով կատարվի այն, ինչ ասացիր»): «Թող լինի ինձ». ի դեմս Մարիամի՝ մարդկության վճռական խոսքեր, որոնց պատասխանն է Աստծո ուրախությունը: Եւ այլեւս ասելիք չկա, որովհետեւ խոսքը կրավորական հարումի, ստորաքարշ հպատակության վերաբերյալ չէ, այլ ըղձալի փափագի. իսկապե՛ս լինի այն, ինչ ասացիր: Այստեղ տեսնում ենք աշակերտության հաջորդ քայլը. լինել ուրախության աշակերտ, նշանակում է հասկանալ, որ ապագան ավելին է, քան անցյալը եւ նույնիսկ ներկան: Տոնախմբությունն սկսված է, բայց այն, ինչ մեզ սպասվում է, ավելին է....Ապագան ավելին է, քան անցյալը:

Սիրելինե՛ր, Ավետման տոնը մեր երկրում հռչակված է իբրեւ մայրության, գեղեցկության եւ սիրո օր: Մարիամի ուրախությունը այն մարդկանց ուրախությունն է, ովքեր հրաշքի ակնկալիքով եւ երախտագիտության զգացումով սպասում են զավակի լույս աշխարհ գալուն, քանի որ ամեն նոր երեխայի ծնունդը հրաշք է, անսովոր ու անիմանալի խորհուրդ, նոր կյանք, նոր հույս ու նոր խոստում: Ամեն ծնունդ կարող է լինել փրկության, շնորհի, օրհնված լինելու նշան եւ խոստում: Սակայն կարեւոր է այդ խոստմամբ ապրելը եւ այն իրականություն դարձնելը: Երբ հրաշքի ակնկալիքը հանդիպում է Աստծու փրկարար գործին, ծնվում

է ուրախությունը: Մոր ուրախությունն իր գավակն է: Մայրության տոնի առիթով իմ սրտագին շնորհավորանքներն եմ բերում Ձեզ, սիրելի՛ մայրեր եւ քույրեր, աղոթքով, որպեսզի Մարիամ Աստվածածնին ավետված ուրախությունը մշտապես լինի Ձեր կյանքում: Իմ հատուկ շնորհավորանքի խոսքը Մարիամ անունը կրող անձանց. սիրելի՛ Մարիամներ, այսօր նաեւ Ձեր ավետման տոնն է, ավետում, որ ուրախության օր է: Ուրախությունը օրհնության պտուղն է: Թող այն մշտապես լինի Աստծո շնորհատու պարգեւը բոլոր նրանց, ովքեր սերտում են Աստծու խոսքը եւ սպասում Նրա արքայությանը:

Թող հույսի Ասպված լիացնի ձեզ ամենայն ուրախությամբ եւ խաղաղությամբ, որպեսզի Սուրբ Հոգու զորությամբ դուք հույսով առատանաք, քանզի Տիրոջ ուրախության մեջ է մեր զորությունը: